

ԹՈՐՈՆԹՕՂԱՅԵՐԸ

Ա.

Վ. ԹՈՐԳՈՍ

Մօտ ութ հազար կը հաշուեն Թորոնթօսացու-
թիւնը այսօր, կազմուած ըրազմաթիւ երկիրներէ
հոն հասած ամէն տեսակի եւ գաղափարի տէր ան-
ձերէ եւ, անշուշտ, ընտանիքներէ: Կան անոնք մի-
ջեւ թօշուղ կուսակցականներ, ինչպէս մասնաւորա-
բար Եգիպտոսացիքը: Իբր կուսակցականներ ա-
նոնցմէ ետք կուզան հաւանարար Լիբանանցիները
եւ ետքն ալ Սուրիահայերը: Կան նաեւ քիչ թուով
տարբեր երկիրներէ, նոյնի-կ Սովետներու հայ-
բենիքէն գաղթածներ սակայն, որովհետեւ գաղթօ-
ճախին աննշան մէկ տոկոսը կը կազմեն, անոնք
քաշուած կապրին գրեթէ իրենց կեղեւին մէջ: Եւ
սակայն, Թորոնթօսացութեան միջեւ մեծ թիւ մը
մը կը ներկայացնեն Իսթանպուլահայերը (Պոլսե-
ցի կը կոչեն անոնք իրենք զիրենք): Եւ ահա պատ-
կերը կամ բողջանալ:

Ինչ կայ որ, Գանատահայութիւնը իբր ամ-
բողջ, իր կազմութեամբ կը ներկայացնէ բոլոր-
վին տարրեր հաւաքականութիւն մը, կամ համայնք
մը եթէ կուզէք, քան Ամերիկահայութիւնը: Մի-
ացեալ նահանգներու մէջ, ուր որ հայեր կան, ա-
նոնք առ նուազն մէկ սերունդ առաջ գաղթելով ի-
րենց հայրենիքէն եկած հաստատուած են հոն ու
այլեւ, «դուն Հալէպահայ ես, միւսը Եգիպտոս-
հայ է» ըսելով խնդիր մը չունին իրենց միջեւ: Ա-
նոնք իրենք զիրենք կը կոչեն պարզապէս Ամերիկա-
հայեր, ու թող ներուի մեզի ըսել թէ յաճախ կապ
չունին իրական Հայ կեանքին հետ, հակառակ մա-
մուլին կատարած բարձրադաս կանչերուն ու
ազմուկին...: Եւ մենք իրաւամբ կըսենք թէ Գա-
նատահայութիւնը կազմաւորման տեսակէտով
ճիշդ հակադասութիւն է Ամերիկահայութեան: Սե-
րունդ չէ անցած տակաւին Գանատան իբր հայրե-
նիք ընտրող գրեթէ բոլոր հայերուն վրայէ: Հետե-
ւաբար եւ բնականաբար անոնք կը պահեն տակա-
ւին իրենց եգիպտահայութիւնը, ինչպէս հայու-
թիւնը եւ այլն: Հետեւանքն ալ այն է որ, թէեւ կը
ջանան գանատացի երեւիլ, բայց կը պահեն ՏԱԿԱ
ԻՆ իրենց տեղական բարքերն ու սովորութիւն-
ները:

Պէտք է անկեղծօրէն խոստովանիլ թէ սասիկա
ինքնին պարզապէս քաջօրին մըն է...: Ու շատ
պարզ է որ Գանատահայերը զիրար չեն հասկնալ
կամ չեն կրնար հասկնալ: Չատ զատ մշակույթի
տէր մարդիկ են անոնք: Եւ մասնաւորաբար աչքի
փուշ է նախկին Իսթանպուլահայը, որ ոչ մէկ քա-
ղաքական կուսակցութեան կը պատկանի ու հետե-
ւաբար Հայ չէ, այլ վատասերած էակ մը: Միւս
կողմէ, ուրիշ զանազան տեղերէ գաղթած Հայեր
Իսթանպուլցիներու աչքին կերեւին մէկ մէկ խոտ-
վարարներ իրենց կուսակցական հակամարտութիւն
ներով եւ իրարու հանդէպ ունեցած իրենց անհան-
դարձողութեամբ: Պէտք է ըսել թէ եւ չէ երեւո-
թեանց խաղաղ համակցութեամբ կապրին, ա-
նոնք բոլորը իրարու հետ: Հակամարտութիւնները
խորն են, յաճախ անտեսանելի եւ մակերես կեւն
որով չըջաննորու կամ որով զրոյստատմաներով:

Անհանդարձողութիւնը, որ առկայ է գաղութին
մէջ իրարու հանդէպ, ունի նաեւ իր ուրիշ պատ-
ճառները, որոնք թերեւս կրնան անտես առնուիլ
հարեւանցի դիտողներու կողմէ: Աստուծոյ մէկն է
ԾՈՒԽ բառը, կամ բացատրութիւնը: Արդ, Իսթան-
պուլ ծնած ու ապրած եւ պարզաներու բերմամբ
որով չըջանէ մը ի վեր Գանատա ապրող հայու մը
ըմբռնումով Ծուխը այն անձն է, կամ առաւելա-
պէս այն ԸՏՏԱՆԻՔԸ, որու կրօնական կարիքը կը
հողայ տաներէց քահանան: Թրքահայը նոյնիսկ
կանդիտանայ թէ «ծուխ» կը նշանակէ նաեւ խա-
նութի մնայուն յանձնարար, թէեւ յիշեցնել հարկ
է որ Գանատահայն ալ ընդհանրապէս բրաւին առ-
երկրորդ նշանակութեան լուր չունի: Գանատայի
համար ծուխը ԹԱՂԵՑԻՆ է: Եւ ահա հող է որ կը
սկսի, առաւել կամ նուազ յղժուարութիւնը Իսթան-
պուլահայերուն համար, մանաւանդ երբ անոնք
նորեկ կը սեպուին: Գանատայի մէջ անգոյ է աւան-
դական տաներէց քահանայի դուրսիւնը, տրուած
ըլլալով զանազան թաղերու իրարմէ ունեցած հե-
ռադրութիւնները: Գանատահայը, ուրեմն տանե-
րէցին վճարելիքը կուտայ եկեղեցիին եւ կըլլայ
ՏՐԱՏՈՒ անդամ:

Այս վերջինը բառ մըն է, որու ծանօթ չէ թըր-
քահայը, որեւէ կերպով: Հայոց լեզուի գլխաւոր
բառարաններուն մէջ ալ գոյութիւն չունի ՏՐԱ-
ՏՈՒՆ: Չենք գիտեր ուրիշները, բայց մենք գայն
առաջին անգամ ըլլալով լսեցինք Գանատայի մէջ:
Կը նշանակէ եղբր եկեղեցիին տուրք վճարող ան-
հատ: Մենք մեզի ըսինք թէ չինուած էր ան ԼՐԱ-
ՏՈՒ բառին վրայ, որ ինչպէս յայտնի է կը նշանա-
կէ լուր տուող: ԼՐԱՏՈՒ ՏՐԱՏՈՒ: Գանատայի
մէջ եթէ կուզես համայնքային (ազգային) ընտրու-
թեանց մասնակցիլ պէտք է եկեղեցիին վճարես
տարեկան անդամատուրքը եւ ըլլաս... Տրատու
անդամ:

Յազոբոյով. - ԶԱՂԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ

Անհրաժեշտ է հշտել թէ նախանձի, զիրար չհզօքացնելու, կարելի չափով զիրար պզտիկ ցոյց տալու եւ զիրար արհամարհելու բաւական երկար պատմութեան մը զանազան դրուադներն, են թորոն թօհայութեան վերջին տարիները: Դժխեմ ճակատագիրն է այդ Հայուն, եւ կը գտնէ անպայման զա նիկա, ուր որ ալ գտնուի ան արեւուն տակ: Յա կոքն ու Վաղարշակը, Սիրարփին ու Հերանոյշը կողք կողքի կը կանգնին եկեղեցին, Հաւատամքի պահուն ձեռքերով, միացուցած դառանց գիտնալու խորապէս թէ ինչու եւ նոյն ձեւով ալ, կը զգան, բոլորովին սնդիտակ, թէ հակառակորդներ են իրարու:

Պէտք է ըսել նաեւ որ «Ազգային թիւթիւնը» շատ տարածուած ու խիստ ի պատուի ասպարէզ մըն է Գանատաշայութեան միջեւ, մասնաւորաբար այն ինչ կը վերաբերի թորոնթօ հաստատու հայերուն համար: Եւ բնականաբար, հոն ուր ազգային թիւթիւն կան, կան նաեւ ակնաւոր գաղաթիւներ, մէկը միւսէն աւելի բարձր ու փառահեղ...

Եւ սակայն, շատ անգամ պատահած է մեր մէջ որ մեր ներքին հակամարտութիւններէն օգտուած են օտարները, մեր թշնամիները: Ասիկա ամբողջ մեր Պատմութիւնն ի վար խիստ աղիտալի եղած է մեզի համար, ինչպէս բոլորս գիտենք: Բայց երբ մենք մեզի մնացած ենք մեր հակամարտութիւններուն հետ, այդ վիճակէն յաճախ ծնած են բարեբաստիկ հետեւանքներ: Դարերու մեր պատմութեան մէջ շատ են օրինակները այս իրողութեան: Կը բաւէ միայն յիշել Մխիթարեաններու պարագան: Անոնք, անցեալին մէջ, պառակտուածով մը երկուքի բաժնուեցան (Վենետիկեան եւ Վիննապոլսեան) եւ այդ բաժանումը օրհնութիւն մը եղաւ մեր Մշակոյթին համար իբր ամբողջ:

Այդպէս ալ պատահեցաւ Գանատայի մէջ ու պառակտումը օրհնութիւն մը եղաւ, փութացնելով ծնունդը «Ամենօրեայ Ազգային վարժարանի մը»: Անհանոյ, սարսափազդու փոթորիկէ մը եւ հեղեղանման տեղատարափէ մը ետք ծագեցաւ պայծառ արեգակը, իր տաքուկ շողերով թերմացրելով թորոնթօհայութեան սրտերը: Գանատայի գաղութին հիմնումէն ի վեր առաջին հայ վարժարանն էր այդ, որ կը բացուէր թորոնթօյի մէջ: Նեղին էր ուրեմն հո՞ծ մեծամասնութեան մը զգացած մեծ ուրախութիւնը եւ անտեղի ընթացքը փոքրաթիւ խմբակի մը: Այդ եւս բնական էր, որ ունեւ ըլլալով որ բոլոր լաւ բաներու դէմ ալ հակառակորդներ կրնան գտնուիլ...:

Արդ՝ բացատրել ջանալէ առաջ, թէ ինչ փութելի անցաւ թորոնթօհայ Ազգ. վարժարանի հիմնումը, կարժէ աչք մը նետել գաղութին ազգային կազմակերպութեան վրայ, տեսնելու համար յի տակօրէն թէ ինչ ազդեակներ եւ անոնց ետեւ կանոնած անձեր ինչ դեր խաղացին բեմերու վրայ, կամ ջուլիաներու մէջ:

Սեպեմ Գանատայի հայ գաղութը մինչեւ վերջերս կարծուած էր Սմբէրկայի Միացեալ Նահանգներու Կրօնական Բնակիչներու Կոնգրէսի կողմէն որ իբր առաջնորդ տեղի ինքնաշարժ Միացեալ Նահանգներու հայ գաղութներու համար, կարողանար Սրբազանին իրաւաստութեամբ իրենց բոլորովին տարրերէն հարուստ

կը շարունակուին ըլլալ), քան Իսթանպուլի պարագան: Գանատայի մէջ Ծխական Խորհուրդի (Իսթանպուլի Թաղ. Խորհուրդն է) նախագահը, եկեղեցիին ներքին է, թող ըլլայ ասիկա պարզ քահանայ մը, կամ բարձրաստիճան եկեղեցական մը:

Այսպէս, քանի հովիւը կը գտնուի, խիստ բնականաբար առաջնորդին գերիշխանութեան տակ, թաղային խորհուրդն ալ (Ծխական Խորհուրդ) ենթակայ է Առաջնորդ Սրբազանին: Այլ խօսքով, առաջնորդը բացարձակ իրաւասու է ժողովրդական ջուլիաներով ընտրուած Ծխական Խորհուրդի ոեւ, մէկ անգամը վաւերացնելու կամ ոչ...: Անշուշտ որ այս պարագան ներհակ է Հայ Եկեղեցւոյ ժողովրդավար սկզբունքներուն, սակայն ՌԱԶը այդ ձեւով շինած է կանոնագիրը, որպէսզի ուրիշ կուսակցութեան պատկանող անձեր, չկարենան անդամ ըլլալ Ծխականին: Լաւ է թերեւս ասիկա մէկ կողմէն, սակայն սկզբունքալին տեսակէտով բոլորովին անհանոյ եւ վնասաբեր բան մըն է: Ծղրելով ըսենք դարձեալ որ Առաջնորդ Սրբազանին բացարձակ կամքն է որ կը քալէ եկեղեցիին մէջ, ինչպէս կրօնական, նոյնպէս ալ վարչական գետիններու վրայ:

Յաջորդով. - ԴԵՊՐԵՐԸ ԿԸ ԶԱՐԳԱՆԱՆ

ԴԷՊՔԵՐԸ ԿԸ ԶԱՐԳԱՆԱՆ

Գ.

Վ. ԹՈՐԳՈՍ

Մեր ձեռքը ունինք Մայրաթոռ էջմիածնի կողմէ հրատարակուած վերջին օրացոյց դրքոյկը, որ կը կրէ 1978 թուականը: Հոն հանդիպեցանք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի անունին, որու դիմաց կարգացինք:

- Առաջնորդ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արեւելեան թեմին: Նիու Եորք:

Բայց մենք այնպէս դիտելինք, հաւատացած էինք, թէ Արքազանք միաժամանակ առաջնորդն էր Գանատայի թեմին: Ամէն մարդ ալ նոյն համոզումը ունէր: Մակայն քանի որ չէր նշանակուած Մեր բազանին այդ պաշտօնը Մայրաթոռ էջմիածնի պաշտօնական օրացոյցին մէջ, յայտնի էր ուրեմն թէ Թորգոմ Արքազանին Գանատայի Առաջնորդութեան հանգամանքը կրօնական վերին իշխանութեան կողմէ չէր վաւերացուած, կամ առնուազն անոր պաշտօնական հաւանութեան չէր արժանացած: Այլապէս ինչո՞ւ նշանակուած չլլար: Կրնար պատահել որ Թորգոմ Արքեպիսկոպոս անպաշտօն կերպով եւ մինչեւ ցնոր տնօրինութիւն վարէր Գանատայի թեմը: Կարելի էր նոյնիսկ քաղաքական, իր կուսակցական հարցերու մասին ալ խորհել: Այլ խօսելով, արգելք հանդիսանալու համար ուրիշ կուսակցութեան մը Գանատական գործերուն միջամտութեան, ՌԱԿը այդ ձեւով որոշած էր շարժիլ:

Կար նաեւ աւելին:

Վերոյիշեալ օրացոյց դրքոյկին (1978 թուական) մէջ Գանատայի Փոխ-առաջնորդի պաշտօնին դիմաց նշանակուած էր ԱՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐՎԱՆՆԻ անունը: Ու մենք խորհեցանք: Թորգոմ Արք. ունէր իր փոխանորդը Ամերիկայի մէջ: Եւ եթէ Գանատայի համար փոխ-առաջնորդ մը պէտք էր, ապա ուրեմն ինչո՞ւ Արիս Եպիսկոպոս պիտի նշանակուէր այդ պաշտօնին եւ ոչ թէ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդին փոխանորդը...:

Պարզ էր ուրեմն, որ Մայրաթոռ էջմիածին ուզած էր առաջնորդական «անջատ» թեմ մը ստեղծել Գանատայի մէջ ու այդ պաշտօնին առժամաբար կոչած էր նորաօժ Արիս Եպիսկոպոսը:

Ինչ մը հետաքրքրութիւն ԴԸ հետազոտութիւն եւ արհամիտ ինչ երեւանք ելաւ: Հարցը կը թուէր թէ, նախանձի, անհանդուրժողութեան նիւթական թէ ազգային քաղաքական գործերու թընձուկ մըն էր: Հայու անբաժան ճակատագիրը որ, ուր որ ալ ըլլայ կը գտնէ զանիկա եւ կը զգեստնէ՝ առանց ամենադոյզն խղճահարութեան:

Մեր հետաքրքրութեան իբր արդիւնք ձեռք ձգեցինք Մայրաթոռի պաշտօնական օսկան «էջմիածին» ամսագրի 1974 տարւոյ տասներորդ թիւը, ուր կային Արիս Եպ. Շիրվանեանի կենսագրութիւնը եւ իր խօսքը Եպիսկոպոսանալու բուն շարժումներին մասին, ըստւո՞ժ հրատարակաւ:

- Վեհափառ Տէր,

Այսօր հոգեկան խոր եւ խառն ապրումներու օր մը ինձի եւ օժակից Արքազան Եղբայրներու համար, որովհետեւ Նորին Արքութեան բարեհաճ որոշումով եւ ձեռնադրութեամբ մենք կոչուեցանք Եպիսկոպոսական բարձր տասնամեակին: Մենք ունինք այն խոր գիտակցութիւնը, որ ասիկա աշխարհիկ իմաստով փառք ու պատիւ չէ, այլ այդպէսու,

մեր ուսերուն վրայ կը դրուի անլի ծանր եւ լուր պատասխանատուութիւն ծառայելու համար Հայաստանեայց Եկեղեցիին եւ Հայ Ժողովուրդին, ըլլայ հոս, կամ արտասահմանի մէջ:

... Մենք երէկ իջման Ս. Սեղանին առջև ուխտեցինք սրբութեամբ պահել եւ պահպանել Հայաստանեայց Եկեղեցոյ կանոնները եւ աւանդութիւնները ու այն բոլոր սրբութիւնները, որ կը յատկանշեն Հայ Եկեղեցին եւ հաւատարիմ մասնորին Վեհափառութեան հրահանգներուն: Կլ զստահեցնենք, որ մեր ապագայ գործերը վկայի ըլլան մեր ուխտին:

... Այժմ Նորին Արքութեան կարգադրութեամբ պիտի երթամ հովուելու եւ կազմակերպելու Գանատայի շրջանը, որպէս թեմ:

(Ստորագրուածը մեր կողմէ:)

... Ուժերուս ներած չափով պիտի աշխատի վրաս դրուած յոյսերը լիովին արդարացնել, ամուր հիմերու վրայ դնելով նոր կազմուելիք թեմը:

... Կասկած չկայ որ Գանատայի մեր հաւատացեալ զաւակները եւս կը սիրեն Մայր Հայրենիքը եւ Մայրաթոռ Ս. էջմիածինը: Իմ պարտականութիւնս պիտի ըլլայ անոնց սրտերուն մէջ արծարծել եւ անչէջ պահել Եկեղեցասիրութեան, էջմիածնասիրութեան եւ հայրենասիրութեան ոգին:

Պարզ էր ուրեմն: Վեհափառ Հայրապետը եպիսկոպոսութեան պաշտօնին բարձրացնելէ ետք Արիս Շիրվանեանը, անոր պաշտօն յանձնած էլ «Հովուելու եւ կազմակերպելու Գանատայի շրջանը, որպէս թեմ»:

Բայց ո՞վ էր արդեօք նորաօժ յիշեալ Արիս Եպ. Շիրվանեանը:

Յաջորդով -- Արիս ԵՊ. ՇԻՐՎԱՆՆԻ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ այս նոր իշխանաւոր ծներ է Հայփա -Պաղեստին-, 1934 տարւոյ Յուլիսի 23ին: Աւագանի անունով է եղեր Սրմենակ: Յանախեր է ծննդավայրի Ս. Եղիա վարժարանը. գոր աւարտեր է տաւներեք տարեկանին:

Ժամանակի մը համար փոքրներու փրանսկան վարժարանին աշակերտելէ ետք ծնողքին հետ անցեր է Պէյրուք -1948-: Հոն աւարտեր է նոր Սարաշի ազգային վարժարանը -1948-50-: Արձանագրուեր է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը -1952-: Արժանացեր է սարկաւազի ձեռնադրութեան 1954:

Յաջորդոյ տարիներու ընթացքին մասնակցեր է Լոնսոնի համալսարանին ճէնըրլո Սէրքիֆիէէյթօֆ Էֆգէմիէէյըմիէն եւ ստացեր է համալսարանական վկայական: Աւարտելով ընծայարանի բաժինը եղեր է պրեղայ, կոչուելով Տէր Արիս -1957-:

Իբր պատրաստուած, յառաջդիմաւոր հոգեւորական, էջմիածնի մէջ վարեր է պատասխանատու պաշտօններ: Նշանակուեր է ժառանգաւորաց վարժարանի փոխ տեսուչ, այս գաւազանակիր: Եղեր է հոգեւոր տեսուչ Ամմալի Հայոց 1958-1960: Գացեր է Լոնսոն կատարելագործելու իր ուսումը 1960 Աւարտեր է Տարիքմիի աստուածաբանական փափաքէն պատուոյ յիշատակութեամբ եւ ստացեր է աստուածաբանութեան Պակաւոր Արուեստից -Պէվլեր օֆ արթ- տիտղոսը:

Աւելի ետք հովուական պաշտօն վարեր է Բարիզի մէջ, միաժամանակ հետեւելով Էնթրիքի Գաթոլիկ համալսարանի դասընթացներուն: Երեսուն երկու տարեկան, գացեր է Լոս Անճէլէս իբր հոգեւոր հովիւ աշնտեղի հայոց 1966: Գալիֆորնիոյ մէջ ունեցեր է քարոզչական, հովուական բեղուն գործունէութիւն: Ընդունուեր է Թեմական հորիւորդի անդամ եւ ատենապետ: 1972ին վեհափառ Հայրապետի կողմէ հրահրուեր է Մայրաքոռ էջմիածին իբր հոգեւոր նեմարանի փոխ տեսուչ:

Աւելի ետք 1973-1974 ուսումնական տարւոյ ընթացքին վարեր է հոգեւոր նեմարանի տեսուչի պաշտօնը: Եպիսկոպոս ձեռնադրուելով 1974, վեհափառ Հայրապետի հրահանգով ու անոր կողմէ նշանակուեր է Գանատահայոց առաջնորդական փոխաւորդ, ինչպէս յիշեցուեցաւ, իբր թեմ կազմակերպելու համար Գանատան:

Արիս Արքազան Թորոնթօ հաստատուելէն անմիջապէս ետք ձեռնարկեր է իր պաշտօնին իբր առաջնորդական փոխաւորդ: Ընդունուեր է նաեւ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Թորոնթ Սրբ. Մանուկեանի առաջարկը, գործելու համար նաեւ իբր կովիւ Թորոնթօյի Ս. Երրորդութիւն Եկեղեցիին: Եւ եղեր է մեքենակաւորէն Եկեղեցւոյ Ծխական հորիւորդի նախագահը, իբրէ առաջ հոն պաշտօնավարող, բայց ուրիշ պաշտօնի մ. կոչուելով կեռացած վարդապետին տեղ:

Ծխական հորիւորդի նիստերուն ընթացքին Արիս Արքազան արժարժեր է Գանատայի իբր Միացեալ Կանադացիներու Արեւելեան Թեմէն զատ թեմ պատրաստուողը եւ իր գլխաւոր պաշտօնին այդ թեմի կազմակերպելու պարագան:

Խօսուի է նաեւ Թորոնթօյի մէջ հայկական ա-

մեծօրեայ վարժարանի մը անհրաժեշտութեան մասին:

Կը թուի թէ Արիս Արքազանի այս խօսքերն առաջնորդութիւնները դրական կերպով արձագանկ չեն գտեր Նիւ Եօքի մէջ, ուր Ամերիկայի առաջնորդ Արքազանը, ապահովաբար դրդուած կարգ մամակաւորներէ, սկսեր է հակազդեցութիւն ցոյց տալ Շիրվանեան Արքազանին գործունէութեան դէմ, եւ անաբարի օր մըն ալ հետեւեալ հրահանգ ուղղեր է անոր.

- Յետ այսու առնուած է ձեր վրայէ Գանատայի փոխ առաջնորդի պաշտօնը: Կը մնայ ձեզի միայն Թորոնթօյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հովիւի պաշտօնը:

Արիս Եպ. մտնուեր է արդար ցատումի մը: Ինքը Գանատայի փոխ առաջնորդութեան պաշտօնը ստացեր էր ուղղակի վեհափառ Հայրապետէն: Եւ հիմա Հայրապետին ստորագրաներէն մէկը, առանց էջմիածնի հաւանութեան, կը ջնջեր այդ պաշտօնը, թողով անոր պարզ Եկեղեցիի մ. հովուութիւնը: Եւ այդ ալ առանց պատհաւարանութեան, առանց տեսանելի, կամ քափուած յանցանքի մը, զանցաւորութեան մը գոյութեան...

Կարելի էր նոյնիսկ խորհիլ թէ Թորոնթ Մանուկեան Արքազանին այս ելոյթը տեսակ մը կացի նահաբոււ էր ընդհանուր ազգային գերագոյն շահերուն, քանի որ պատրաստուած, հասած անձի մը արգելի հանդիսանար իր պարտականութիւնը կատարել հանդէպ իր ժողովուրդին: Արդէն Թորոնթ Սրբ. իր կողմէ շարուած պաշտօն մը Արիս Եպիսկոպոսի վրայէն առնւած պահուն որեւէ պատհաւարանութիւն ցոյց չէր տուած:

Պարզ հրահանգ մը միայն... Յաջորդով - ԵՐԿԻՆՔԸ ԿԸ ՊԱՅԾԱՌԱՆԱՅ:

ԵՐԿԻՆԻՔԸ ԿԸ ՊԱՅԾԱՌԱՆԱՅ

Ե.

Վ. ԹՈՐԳՈՄ

Նիւ Երբէն Արիս Սրբազանի եկած հակաօրինական ըլլալուն չափ ալ տարրական իմաստէ գորկ հրահանգը ցատում եւ ընդվզում պատնասեր է Գանատայի քեմին բարեջան առաջնորդական փոխանորդին:

Ինչ յանդգնութեամբ Ամերիկայի առաջնորդ Արիս Եպիսկոպոս կը գրկէր պաշտօնէ մը, գոր ինչ չէր տուած, այլ Ամենայն Հայոց Հայրապետը...: Խնդրոյն մէջ քիչ մը խորացողներ բաց աչքերով պիտի տեսնէին անմահուր խաղը:

Թորգոմ Արք. Մանուկեան որչափ չէր կրցած ձերբազատուիլ անձնական կերբերէ, սոյսչափ ալ խաղալիք դարձած էր կարգ մը մուրիւն մէջ գոյժող ուժերու, որով յաջողէր էր առասց քթթուու ա կուսացնել պարկեշտ ու գործունեայ տարբ մը, յաստիս Արիս Եպիսկոպոս Շիրվանեանի:

Այս վերջինն ալ խորապէս վիրաւորուած իրեւ հանդէպ ցոյց տրուած այս անվայել ընթացիէն, յարսար տեսք էր հրաժարիլ իր բոլոր պաշտօններէս, բացի իր շատ սիրած ժողովուրդին ծառայու մեծ եւ նուիրական պարտականութիւնէն: Ինչ այդ պարտականութիւնը, որ իր ուխտն էր միաժամաւ, կատարողէր գինէր գլուխ կասգսիլ Թորոնթօյի մէջ ամեսօրեայ հայ վարժարան մը հիմնելու ծրագրին:

Նման հաստատութիւն մը հիմնելու եւ անոր տնօրէնութիւնը ստասանելու ամէն պաշտօնակատ հասգամանք ունէր Արիս Սրբազան: Ընկեր սաստ այսպէս ուժ մը, որով պիտի կարենար յաղթանակել բոլոր դժուարութիւնները: Ինչ այդ ուժը ժողովուրդին գործակիցն էր: Եւ արդարեւ:

Շատոնց ի վեր Թորոնթօհայութեան ծոցիւ մէջ կը խմբուէր շողափն մէջ քրկրորդ եկեղեցի մը հիմնելու գաղափարը, տրուած ըլլալով որ Ս. Երրորդութիւն եկեղեցին չէր բաւարարէր անհրաժեշտութիւնները: Սիւս կողմէ նոյն եկեղեցիին ծխական խորհուրդը թաղ. խորհուրդը կազմուած ըլլալով այլամերժ, չբստու ուսմար խորհուրդէ մեծամիտ տարբերէ, ժողովուրդին մատուանը Իսթանպուլահայ հաստուածը տրամադիր էր նոր եկեղեցի մը հիմնելու: Յետոյ պատահեցաւ որ Արիս Եպիսկոպոսի հարկէ ստիպեալ իր պաշտօններէն հրաժարուը գուգադիպեցաւ ժողովրդական այն շարժումին, որով բազմաթիւ անհեր իրենց ընթանիւքներով միասին հեռացան Ս. Երրորդութիւն եկեղեցիէն, կազմելու համար բոլորովին նա համայնք մը եւ նոր եկեղեցի մը, գոր կոչեցին Ս. Խաչ: Բայց եղան մարդիկ որ պատակտում յորջորջեցին այս շարժումը: Եւ պատակտիչներ կոչեցին շարժումին գլխաւորները, որոնց միջեւ մեծամասնութիւն կրկնակն նախկին Իսթանպուլահայերը Բնականաբար պատակտիչներուն միջեւ նկատուեցաւ նաեւ մաքրամաքուր եւ անբասիր Արիս Եպիսկոպոս:

Եւ սակայն, կարաւանը կը փախէ...: Գաւառական եկեղեցիի մը երէցին վերածուելու մղուող համալսարանական, կորովի եպիսկոպոսն էր իր ցեղին վայել ցնցումով մը բօքափելէ ետք անհարկի լուծը, հայրենասէր ու գաղափարապաշտ ուժերու յարատեւ ու յարանուն օգնութեամբ հիմն

որաւ Ամենօրեայ Ազգային վարժարանի Մը, գոր հիմնադիրներէր կոչեցին Ս. Խաչ:

Կարաւանը կը փախէ...:

Թար-ը գոր անարգեց Նիւ Երբ անկիւնափարեղաւ: Արիս Եպիսկոպոս յաջողուց հիմնուը Թորոնթօհայ վարժարանի մէջ: Երազ մը, որու իրակա շացման կը փափաքէր շատոնց ի վեր Բարեգործականը, սակայն Ծխական խորհուրդներու անհարակ գործունէութեանց երեսէն, չէր յաջողած: Յաւայի է նոյնիսկ ըսել, քէ նիւթական ամէն կարելիութիւն ունէին այդ մարդիկը, սակայն հակառակ ամէն բանի չյաջողեցան ուղղաձիգ կանգնել իրենց սրունքներու վրայ:

Այո, հակառակ խնայուր աղմուկի, գոր յարուցին ամէն լաւ բանի քշնէմները, փախեց կարաւանը յաղթական անազամ մը եւս ապացուցանելով դարաւոր առածը:

- Չկայ չարիք, չծնի բարիք...: Յաջորդով - Ս. Խաչ վրժ. ԹՈՐՈՆԹՅԻ:

Ս. ԽԱԶ ՎԱՐՄԱՐԱՆ ԹՈՐՈՒՄՈՅԻ

Ներկայ 1978 տարւոյն Սեպտեմբերի 18ին ԹոՐՈՒՄՈՅԻ ԱՆՍՏԻՆ ազգային վարժարանը բացուիւնք հայ մանկներու առջեւ: Ասիկա ՄԵԾԱ-ԳՅՅՆ ղեկավար էր որ տեղի ունեցաւ Գանատահայ գաղութին ներս: Կը գուգաղիպէր Թորոք-օհայու-թեան ծոցին մէջ կազմուած էր եկեղեցիի մը բա-ցումին, խումը մը յառաջդիմաւէր, ուղղամիտ ազ-գայիններու ջանքերուն շնորհիւ եւ առաջնորդու-թեամբ Գանատայի երաժարեալ փոխ առաջնորդի՛ն Գեր. Արիս Եպ. Շիրվանեանի:

Նորահաստատ Ս. Խաչ Եկեղեցւոյ Ծխակաւ-տորութիւնի անխոնջ ու գիտակից Ատենապետին ծանօթ մտաւորական եւ ներքին հիւանդութեանց մասնագէտ ՏԲԹ. Վարդան Այնանեանի հաշտեց-ւէր ջանքերով կազմուած վարժարանի խնամակա-լութիւնը անսխալ նշգրտութեամբ վարեց բացման կրօնական եւ աշխարհիկ հանդիսութիւնները յոգ-նախտուն բազմութեան մը ներկայութեան, որ փու-թացած էր ներկայ ըլլալ գանատահայութեան եւ ի մասնաւորի Թորոք-օհայութեան համալս աչդ բա-ցառիկ հանդէսին: Այդ առիթով խնամակալու-թեան ատենապետ ներքին մասնագէտ ՏԲԹ. Նու-պար Այնանաբ խնամակալ իր ընկերներուն անու-նով ըրաւ կարեւոր յայտարարութիւն մը, որու բո-վանդակութիւնն էր իր գլխաւոր գծերուն մէջ.

Սրտի անեղծ գոհունակութեամբ կուգանք յայտարարել թէ, վերջին երկու տասնամեակներու կրնանք ըսել անխոնջ ամէն թորոք-օյարեանկ հա-յու երազը եղող ամենօրեայ հայ վարժարանի գա-ղափարը, բուռ մը անձնուէր ջանասէր ազգային-ներու ջանքերով այսօր իրագործուած է: Իպրոցը կենտրոնացած է Սուրբ Խաչ Ազգային Ամենօրեայ Վար-ժարան անունով:

Իպրոցը հայ ծնողքէ սերած, կամ միայն մէկ շառաւիղի կողմէ հայ ծագում ունեցող եւ կամ աւելի ետաւոր ազգականական կապերով հայ իրա-կանութեան հետ առնչութիւն ունեցող ամէն գունա-տացի եւ կամ Գանատայի մէջ օրինապէս բնակու-թիւն հաստատուած տղոց համար բացուած է: Ան պիտի ունենայ առ այժմ մանկապարտէզի երկու եւ ձախակրթարանի Ա. դասարանները եւ պիտի ա-ռաջադրէ ամէն յաջորդող տարիներուն մէկ դա-սարան եւս աւելցնել իր կարգերուն վրայ, հասնե-լու մինչեւ վեցերորդ դասարան: Ոչ մէկ յարան-ուանական, հատուածական, կուսակցական կամ աշխարհակեցողութեան տարբերութիւններ կըր-ձան պատուար հանդիսեալ աշակերտներու դպրո-ցի շարքերուն մէջ ընդունուելուն:

Ամէն ջանք պիտի քափուի որ հայու գաւակը կրթեալ լաւ պատրաստուած եւ շնորհալի Գանա-տացի մը ըլլալու առընթեր, մնայ իբր հայ իր ամ-բողջական աստուովը, իր կեանքի առաջին եւ ամե-նակարեւոր տասնամեակից տեւողութեանը եւ անոր ջանքով գիտակցութիւնը, սէրն ու յարգանքը հանդէպ իր ազգային ծագումին:

Այդ բուռ մը անձնուէր ազգայիններու շարքն-րուն մէջ էիմ դպրոցին խնամակալները, ՏԲԹ. Այ-նանաբ գաւ, Պետրոս Մուշեան, Պերն Ենովեան, Տիկ. Թեֆօն Քեօզէրեան, Ժիրայր Թօրիեան. Կարօ Խապայեան, Եփրեմ Իսթանպուլեան, Մա-կար Գուգուեան:

Բացման օրուն պարզ ու սրտագրաւ հանդի-

տութեան տարի եղան արտարախ նուիրատու-թիւններ, որոնց գումարը յանգեցաւ աւելի քան 8 . 10 հազար տօլարի, ներառեալ կարգ մը գիտակից ազգայիններու ըրած հազարական տօլարի գումար-ները,

Առաջին իսկ օրէն Ս. Խաչ ամենօրեայ վարժա-րանը ունեցաւ 31 երկսեռ աշակերտ ու ամէն յայ-ներջնչեց թէ յառաջիկայ տարի պիտի կրկնապատ-կուէր աշակերտութեան թիւը, եւ մէկ քանի տարի-ներու ընթացքին պիտի հասնէր մինչեւ 150:

Կային սակայն հակամարտ ուժեր, որոնց գըլ-խաւորն էր Թորոք-օյի Ս. Երբորդութիւն Եկեղեցի-ծխակաւ խորհուրդը իր պատուարծան ատենապե-տով: Այդ անձերը առաջին իսկ օրէն դէմ էլան անձնագոհ ու ազգանուէր փոխ առաջնորդ Արիս

Շիրվանեան Եպիսկոպոսին, գոր-չդադրեցան քա-րոյապէս հայածելէ եւ անոր մասին չարախօսելէ: Յայտնեմք նաեւ որ այդ կերպարները ունէին նաեւ իրենց համակիր կոյրերու շրջանակ մը, որ չդադ-րեցաւ երբեք իր չարամիտ քարոզութիւններուն մէջ: Ինչպէս միշտ պատահած է մեր միջեւ, այդ մարդիկը յար մտեցին միութենէ, միասնականու-թենէ եւ չկրցան տեսնել թէ իրենց բոլոր այդ ա-բարքներուն նկարը կը գծագրուէր պայծառօրէն Պատմութեան պատուարին վրայ: Այն Պատմու-թեան, որ անաչառ էր եւ սուտ վկայութիւններ տը-ւողները պիտի դատաւարտէր անպայման:

Յաջորդով: ԾԻԾԱՂԵԼԻՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԴՐՍ ԿԱՆԸ:



ԹԻԾԱՂԵԼԻՊՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ

Վ. ԹՈՐԳՈՍ

Հստակաբար թե թորոնք-օհայ Առաջին ամենօր-
եայ ազգային վարժարանը բացուեցաւ 1978 Մեյ -
տեմբերի 18ին երկուշաբթի օր, կրօնական եւ աշ-
խարհիկ պատշաճ հանդիսութիւններով:

Գեր Արիս Եպ. Շիրվանեան իբր կեդրոնա-
կան եւ շարժիչ ուժը այդ հիանալի եղելութեան:
վարեց կրօնական թե աշխարհիկ հանդիսութիւննե-
րը: Պետք է ըսել թէ Սրբազանը կը ճանաչայ թէ
բառին պարզ եւ իրական իմաստով: Ու ամէն իւր
ներառիկ թորոնք-օհայ ^{Եւսեւ 1978} իբր ամբողջ վեր-
դարձաւ իր առօրեայ կեանքին եւ դժուարութիւն
շնորհ Անցան օրեր եւ ահա կրայարակի վրայ ե-
րեւցաւ նոր Սերունդի Հոկտեմբերի թիւը:

Ասիկա թորոնք-օյի Ս. Երրորդութիւն եկեղե-
ցիի ամսաթերթն էր: Եւ հոն Հ. Թորոնեան մը, ա:
նաջնորդողին մէջ կը գրէր ներմակի վրայ սեւ:

- Վերանուտի այս օրերուն, բժականաբար մեր
մտածումներուն առանցքը կը կազմէ ամէն բանէ
առաջ մեր երախտներուն կրթական հարցը եւ ա-
նոնց ազդեցան:

- ինչով եկ մեղադրելի նոր սերունդը, երբ ան-
րին դէմ պայքարելու եւ պաշտպանուելու միակ

բերդը Հայ Ամենօրեայ վարժարանը գլացած ենք
իրեն: (-Ստորագծումը մերն է-)

Կարիքը, կենսական պահանջքը Ամենօրեայ Նա
խակրթարանի մը հիմնումն է (-Ստորագծումը իրն
է...)

Ապահովարար Հ. Թորոնեան միակ անձն էր,
ամբողջ Գանատայի մէջ, որ կանգնուեալ թէ հոն
իր քթին տակ, բացուած էր արդէն ամենօրեայ հայ
վարժարան մը: Այլապէս ինչ յանդգնութեամբ կը
նար ան վերոյիշեալ տողերը սեւագրել...: Բայց
թերեւս իր վարպետները պատուէր տուած էին ա-
նոր կամաւոր կոյր ձեւանալ, չտեսնել արեւու պէս
պայծառ եղելութիւնը, այդ է Ս. Խաչ վարժարանի
հիմնումը թորոնք-օյի կեդրոնին մէջ:

Բայց կարծես նոյն կէտէն կը մեկնէին Ամերի-
կայի Արեւելեան թեմի առաջնորդն ու թորոնք-օյի
իր մանկկապիկը, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ ծը-
խական խորհուրդը: Անտեսել Արիս Եպ. Շիրվան-
եանն ու իր գործը: Այդ մարդիկը, բոլորն ալ միա
սին առած, կը ջանային արեւը ցեխով պատել: Բայց
միթէ կարելի էր նման տղայական արարք մը: Ա-
հաւաստիկ որ ոտքի կանգնած էր թորոնք-օյի Ս.
Խաչ ազգ. ամենօրեայ վարժարանը առոյգ ու քա-
ջառողջ եւ կը յառաջդիմէր օրէ օր: Հոն էր նաեւ իր
անխոնջ տեսուչը Արիս Եպ. Շիրվանեանը:

Բարի հովիւը, որ իր անձը կը գոհարելէր այդ
պէս իր սիրելի եւ յայտնակիցներուն եւ մանաւանդ
նոր սերունդին համար: Մեծ ըլլալու, մեծ կոչուե-
լու ամէն արժանիք ունեցող այդ անձը, որ իր պար
գուկ քաակէն երկու աշակերտի տարեկան ծախսը
անած էր իր վրայ եւ դպրոցին տեսուչը ըլլալով
հանդերձ ամէն առաւօտ իր անձնական կառնով բ
նակարանները կը շրջագայէր մանուկներ հաւաքե-
լով վարժարան կը բերէր, նիշդ տեսնես աղօթք մը
նման: Ճիշդ իր ուսուցիչին, Նագովրեցի վարդա-
պետին նման, որ համեստօրէն զիջանեցաւ իրմէ եր
կու հազար տարրներ առաջ ծունկի գալով իր սեփա-
կան աշակերտներուն ոտքերը լուալու:

Համալսարաններէ ընթացաւարտ այդ համեստ
բայց գիտակից ու գործունեայ հոգեւորականէ
կարծէր որ դաս առնէին իրենց ամարանոցին մէջ
հանգիստ ապրող ու կողիէն վար իջնելու համար
ժողովուրդէն շոգեմակոյկ պահանջող մեծամիտ
կրօնականներ եւ իրենք զիրենք Միջկադարու պատ
նկատող առաջնորդներ: